ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1963 Общественные науки

Գ. Մ. Խաչատրյան

# ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԷՏԱՊԸ

*ՍՄԿՊ նոր Ծրագիրը, որը նշանավորում է Մարքսի, Էնգելսի, Լենինի ռևոլյուցիոն տեսության զարգացման նոր էտապը, իր մեջ ամփոփում է ՍՍՌՄ-ի և սոցիալիզմի մյուս երկրների կուտակած բազմահարուստ փորձը, անհերքելիորեն ապացուցում է, որ գեպի կոմունիզմ մարդկության պատմականորեն պայմանավորված շարժումը օբյեկտիվ պրոցես է, որին բնորոշ են ընդհանուր օրինաչափություններ։ Սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիզմի շինարարության ընդհանուր օրինաչափություններից մեկը կուլտուրական ռևոլյուցիայի իրագործումն է՝ նոր գաղափարախոսության և նոր կուլտուրայի հաստատումը։ «Երկրի ինդուստրացում, գյուղատնտեսության կոոպերացում, կուլտուրական ռևոլյուցիա՝ սրանք են սոցիալիստական հասարակարգի կառուցման լենինյան պլանի հիմնական օղակները», ասվում է ՍՄԿՊ Ծրագրում։*

*Կուլտուրական ռևոլյուցիայի լենինյան տեսությունը և պրակտիկան ապացուցում են, որ անկախ այն բանից, թե կուլտուրական զարգացման ինչպիսի մակարդակի վրա է գտնվում կապիտալիստական այս կամ այն երկիրը, սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո նրա առաջ անխուսափելիորեն ծառանալու է կուլտուրական ռևոլյուցիայի իրագործման անհրաժեշտությունը, որպես սոցիալիզմի կառուցման պարտադիր պայման։ Անշուշտ, կուլտուրական շինարարության իրագործման մեթոդները, կախված այդ երկրների բնակչության կուլտուրական աստիճանից, տարբեր կլինեն, սակայն կուլտուրական ռևոլյուցիան ամենուր և բոլոր դեպքերում անհրաժեշտ օղակ է, այլ կերպ հնարավոր չի լինի ակտիվ ստեղծագործության մեջ ներգրավել աշխատավոր լայն մասսաներին, որոնց կապիտալիզմը «ամենաքաղաքակրթված» երկրներում անգամ հեռու է պահում գիտության ու կուլտուրայի բարիքներից օգտվելուց։*

*Առավել զարգացած կապիտալիստական երկրներում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո հարկ չի լինի անգրագիտության վերացման աշխատանքի կիրառում, քանի որ մի շարք երկրներում (Դանիա, Շվեցարիա, Հոլանդիա, Անգլիա) անգրագետներ համարյա չկան[1] կամ նրանց թիվը կազմում է 1—2 տոկոս։ Այնուամենայնիվ յուրաքանչյուր երկրում հաղթանակած պրոլետարիատը պետք է հասնի ժողովրդի կուլտուրական վերելքի բարձրացմանը, ինչպես նաև ստեղծի իր սեփական ինտելիգենցիան։ Սոցիալիզմը կարող է կառուցվել միայն միլիոնավոր աշխատավորների գիտակցական ստեղծագործության շնորհիվ, իսկ առանց գաղափարախոսության ու կուլտուրայի բնագավառում՝ ռևոլյուցիայի՝ այդ խնդիրը չի կարող լուծվել։*

*Վ. Ի. Լենինի բնորոշմամբ՝ կուլտուրական ռևոլյուցիան ամբողջ ժողովրդի հանրակրթական ու կուլտուրական շեշտակի զարգացման մի ամբողջ*

---

[1] Տե՛ս БСЭ, т. 13, стр. 352—353; т. 47, стр. 589; т. 29, стр. 579; т. 7, стр. 295.

պատմական ժամանակաշրջան է, իր սոցիալական նշանակությամբ ու հետևանքներով խորագույն հեղաշրջում աշխատավորների գիտակցության, գաղափարախոսության ու հոգևոր կյանքի մեջ, նրանց դաստիարակումը սոցիալիզմի ոգով։ Կուլտուրական ռևոլյուցիայի խնդիրն է հոգևոր բոլոր գանձերը դարձնել համաժողովրդական սեփականություն, բանվորների և գյուղացիների առաջ լայնորեն բացել կրթության ու գիտության դռները, նրանց դարձնել բարձրակիրթ, բաղմակողմանի զարգացած մարդիկ, ստեղծել սոցիալիզմին նվիրված ժողովրդական ինտելիգենցիա։ Կուլտուրական ռևոլյուցիան կապելով սոցիալիզմի տնտեսական հիմքերի ստեղծման հետ, Լենինը գրում է. «Մեզ համար այժմ այդ կուլտուրական ռևոլյուցիան բավական է, որպեսզի մեր երկիրը լիովին սոցիալիստական երկիր դառնա...»[2]։ Այդ ռևոլյուցիան, ասում է Լենինը, ոչ թե կարճատև, այլ բուրժուական կուլտուրայի փոխարեն պրոլետարական, սոցիալիստական կուլտուրայի ստեղծման ու զարգացման երկարատև պրոցես է։

Սակայն կուլտուրական ռևոլյուցիայի լենինյան տեսությունը չի նշանակում անցյալի կուլտուրական ժառանգության ժխտում։ Ընդգծելով պրոլետարական կուլտուրայի դասակարգային բնույթը, Լենինը միաժամանակ նշում էր, որ այդ չի նշանակում անցյալի կուլտուրայի լրիվ բացասում, որ ոչ մի դասակարգ իր կուլտուրան չի կարող ստեղծել դատարկ տեղերում՝ չհենվելով և չօգտագործելով կուլտուրայի զարգացման մեջ գոյություն ունեցող պատմական ժառանգությունը։ Հանդես գալով որպես կապիտալիզմի գերեզմանափոր, պրոլետարիատը միաժամանակ հանդես է գալիս որպես բուրժուական կուլտուրայի և անցյալի կուլտուրական արժեքների ժառանգորդ։ Անողոքաբար քննադատելով «պրոլետկուլտի» ղեկավարներին, ռապովականներին և ամեն գույնի մանրբուրժուական բացասողներին, որոնք միայն խոսքով էին պայքարում պրոլետարական կուլտուրայի համար, իսկ իրականում ժխտում էին պրոլետարիատի ընդունակությունը քննադատաբար վերամշակելու և յուրացնելու անցյալի ժառանգությունը, առաջարկում էին դեն նետել այն և մաքուր տեղում ստեղծել սոցիալիստական կուլտուրա, Լենինը առաջադրում էր հաղթական սոց. ռևոլյուցիան բուրժուական կուլտուրայի հետ միացնելու պահանջը. «Հարկավոր է վերցնել ամբողջ կուլտուրան, որ կապիտալիզմը թողել է և նրանից սոցիալիզմ կառուցել։ Հարկավոր է վերցնել ամբողջ գիտությունը, տեխնիկան, բոլոր գիտելիքները, արվեստը։ Առանց այս բանի մենք չենք կարող կոմունիստական հասարակության կյանքը կառուցել»[3]։

Սոցիալիզմի շինարարության և հաղթանակի շնորհիվ ՍՍՌՄ-ում իրագործվեց իսկական կուլտուրական ռևոլյուցիա, որը մեծ Լենինի անմահ գաղափարների մարմնացումն է կյանքում։ «Այդ ռևոլյուցիան,—ասվում է ՍՄԿՊ Ծրագրում,—աշխատավոր մասսաներին դուրս բերեց հոգևոր ստրկությունից ու խավարից, նրանց հաղորդակից դարձրեց մարդկության կուտակած կուլտուրայի հարստություններին։ Այն երկիրը, որի բնակչության մեծամասնությունը անգրագետ էր, հսկայական թռիչք գործեց գիտության ու կուլտուրայի գագաթները»[4]։

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 565։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 66—67։

4 ՍՄԿՊ Ծրագիրը, Երևան, 1961, էջ 16։

Իրագործված կուլտուրական ռևոլյուցիայի շնորհիվ հասարակական զարգացման մեծագույն ուժերը՝ ժողովուրդը և կուլտուրան, աշխատավոր լայն մասսաները և գիտա-տեխնիկական գիտելիքները, որոնք հազարամյակներ ի վեր իրարից պատնեշված էին, վերամիավորվեցին։ Սովետական Միությունը դարձավ ոչ միայն քաղաքական տեսակետից ամենաառաջավոր և տնտեսապես հզոր երկիրը, այլև ամենակրթված և բարձր կուլտուրա ունեցող հասարակությունը աշխարհում։ ՍՍՌՄ-ում ամեն տարի միջին հաշվով սովորում է շուրջ 56 միլիոն մարդ։ Ինտելիգենցիան ռևոլյուցիայից առաջ խիստ սակավաթիվ էր։ Ցարական Ռուսաստանի 159 միլիոն բնակչությանն ընկնում էր ընդամենը 290 հազար մասնագետ (բնակչության 0,2 տոկոսը), ներկայումս մտավոր աշխատանքով զբաղվողների թիվը գերազանցում է 22 միլիոն մարդուց, այսինքն ինտելիգենցիան կազմում է բնակչության 10 տոկոսը։ Ապշեցուցիչ է բանվորների և գյուղացիների հանրակրթական մակարդակի աճը։ Բանվորների 40 տոկոսը և կոլտնտեսականների 23 տոկոսն ունեն միջնակարգ և բարձրագույն կրթություն[5]։ Իսկ չէ՞ որ ռևոլյուցիայից առաջ աշխատավորների միջավայրում այդպիսի մարդիկ բոլորովին չկային։

ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջոն Քենեդին ս. թ. հունվարին, կոնգրեսին հղած ուղերձում խոստովանեց, որ ՍՍՌՄ-ի բուհերը տալիս են 3 անգամ շատ ինժեներներ և 4 անգամ շատ բժիշկներ, քան Միացյալ Նահանգները, որ Սովետական Միությունը տարեկան երկու անգամ շատ գիտական ու տեխնիկական կադրեր է պատրաստում, քան ԱՄՆ-ը։

«Սովետական հզորության աճը,—գրել է ժողովրդական կրթության ամերիկյան մասնագետ Ջորջ Ս. Կաունտը,—անիմաստ կլիներ, առանց սովետական լուսավորության սիստեմի ֆենոմենալ զարգացման»։

Կուլտուրական ռևոլյուցիայի մեծագույն նվաճումներից մեկը հանդիսացավ ՍՍՌՄ բոլոր ազգերի ու ժողովուրդների մայրենի լեզուներով ազգային կուլտուրաների բազմակողմանի զարգացումը։ Դրա վառ օրինակը Սովետական Հայաստանն է։ Հայաստանը, որի բնակչության 80 տոկոսից ավելին սովետական կարգերի հաստատումից առաջ անգրագետ էր, այժմ համատարած գրագիտության երկիր է։ Ռեսպուբլիկայում գործող 1247 մասսայական գրպրոցներում, 11 բուհերում և 42 տեխնիկումներում այժմ սովորում է 460 հազար մարդ[6]։ Աշխատավորների կուլտուրական պահանջմունքների բավարարմանն են ծառայում 2800 գրադարան՝ 18 միլիոն գրքային ֆոնդով, 984 ակումբ, չհաշված պրոֆմիությունների և այլ կազմակերպությունների կողմից ստեղծված ակումբները, 10 թատրոն, 22 թանգարան, ավելի քան 660 կինոսարքավորում, կուլտուրայի շրջանային և գյուղական 80 տուն, ռադիոն, հեռուստատեսությունը, կարճ ասած կուլտուրական հիմնարկների այնպիսի մի ծավալուն ու խիտ ցանց, որով կհպարտանային կապիտալիստական աշխարհի նույնիսկ ամենախոշոր պետությունները։ Հաճելի է իմանալ, որ այսօր ռեսպուբլիկայի յուրաքանչյուր բնակիչ կանոնավոր կերպով ռադիո է լսում, իսկ յուրաքանչյուր 5-րդը հեռուստատեսային հաղորդումներ է դիտում։ Բուռն զարգացում է ապրում գիտությունը, սովետահայ գրականությունը, երաժշտությունը, թատրոնը, գեղանկարչությունը, կինոարվեստը։ Այդ ամենը մե-

5 «Պրավդա», 11 փետրվարի 1962։

6 «Սովետական Հայաստան», 21 փետրվարի 1963։

ծապես նպաստում են ժողովրդի հոգևոր աճին, աշխատավորներին ոգեշնչում անձնուրաց աշխատանքի և պայքարի՝ հանուն կոմունիզմի։

Գաղափարախոսության ու կուլտուրայի բնագավառում տեղի ունեցած բովանդակությամբ խորագույն, սոցիալական նշանակությամբ ու հետևանքներով մեծ հեղաշրջման շնորհիվ, ինչպես ասաց ընկ. Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXII համագումարում, ձևավորվել է սոցիալիստական կուլտուրան՝ ապագայի համամարդկային կուլտուրայի նախատիպը։

* * *

Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը գաղափարախոսության և կուլտուրայի բնագավառներում չի նշանակում, թե կուլտուրական ռևոլյուցիան ավարտվել է, որ նրա խնդիրները լրիվ լուծվել են։

Մեր պատմա-փիլիսոփայական գրականության մեջ արդեն հարց է բարձրացվել, նշանակո՞ւմ է արդյոք կուլտուրայի զարգացումը ժամանակակից էտապում նոր կուլտուրական ռևոլյուցիա, թե նա հանդիսանում է ՍՍՌՄ-ում իրագործված կուլտուրական ռևոլյուցիայի հետագա ծավալման ավելի բարձր աստիճան։ Դեռ մինչև մոտ ժամանակներս ոմանք, այդ թվում նաև ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մ. Պ. Կիմը այն կարծիքն էին հայտնում, որ կուլտուրական ռևոլյուցիան մեր երկրում ավարտվել է և այն կապում էին սոցիալիստական հասարակության ստեղծման ժամանակաշրջանի հետ։

ՍՄԿՊ Ծրագիրը, պարտիայի XXII համագումարի որոշումները պարզորոշ ցույց տվին, որ «Կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում տեղի ունեցող կուլտուրական զարգացումը կհանդիսանա կուլտուրական մեծ ռևոլյուցիայի եզրափակիչ էտապը»[7]։ Հասարակական երևույթների գիտական ընդհանրացման հիման վրա Ծրագիրը խորացրեց և ընդարձակեց կուլտուրական ռևոլյուցիայի մասին մեր հասկացողությունը, որպես բազմակողմանի, երկարատև պրոցես, որն ընդգրկում է Մեծ Հոկտեմբերի հաղթանակից մինչև կոմունիզմի կուլտուրայի ստեղծումն ընկած ժամանակաշրջանը։ Այստեղից հետևում է, որ կուլտուրական մեծ ռևոլյուցիան պետք է դիտել որպես դիալեկտիկական օրինաչափ պրոցես, որն անցնում է երկու աստիճան՝ սոցիալիստական և կոմունիստական։ Ծրագիրը տվեց կոմունիզմի կուլտուրայի սպառիչ բնութագիրը, ինչպես նաև նշեց համամարդկային այդ կուլտուրայի շինարարության ուղիները, որոշեց նրա տեղն ու նշանակությունը ապագա հասարակության մեջ։ «Կոմունիզմի կուլտուրան,—ասվում է Ծրագրում,—իր մեջ կուտակելով և զարգացնելով լավագույն այն ամենը, ինչ ստեղծել է համաշխարհային կուլտուրան, կդառնա մարդկության կուլտուրական զարգացման նոր, բարձրագույն աստիճանը։ Նա կմարմնավորի հասարակության հոգևոր կյանքի ամբողջ բազմազանությունը և հարստությունը, նոր աշխարհի բարձր գաղափարայնությունը և հումանիզմը։ Դա կլինի անդասակարգ հասարակության, համաժողովրդական, համամարդկային կուլտուրան»[8]։

Կոմունիզմի կուլտուրան՝ ի տարբերություն կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանի պրոլետարական կուլտուրայի՝ զարգանում է իր սեփական

7 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 156։
8 Նույն տեղում։

սոցիալիստական բազայի վրա, միաժամանակ շարունակում է իր մեջ ներառնել և քննադատաբար վերամշակել անցյալի կուլտուրական ժառանգությունը։ Կոմունիզմին անցնելու համար հարկ չկա արմատապես փոխելու սոցիալիստական կուլտուրան, որովհետև իր գաղափարական բովանդակությամբ և նվաճումներով նա համապատասխանում է կոմունիզմի շինարարության պահանջներին և առանց արմատական հեղաբեկման նա կզարգանա ու կվերաճի կոմունիզմի կուլտուրայի։

Կուլտուրական մեծ ռևոլյուցիայի առաջին (սոցիալիստական) էտապում սովետական ժողովուրդը հիմնականում լուծեց սոցիալիզմի կառուցման ճանապարհին ժողովրդի առաջ ծառացած կուլտուրական շինարարության գլխավոր խնդիրները։ Զարգացման նոր ժամանակաշրջանում կուլտուրական ռևոլյուցիան թևակոխել է իր եզրափակիչ, կոմունիստական էտապը, որի հիմնական բովանդակությունը կոմունիզմի գաղափարախոսական և կուլտուրական բոլոր անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է։ Ծրագրում առաջ քաշված գաղափարական ու կուլտուրական առաջատար խնդիրները հանգում են նրան, որպեսզի լիկվիդացվեն մտավոր և ֆիզիկական աշխատանքի, քաղաքի և գյուղի միջև էական տարբերությունները, հաղթահարվեն կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ և վարքագծում։ Առաջին պլանի վրա է քաշվում աշխատավորների կոմունիստական դաստիարակության խնդիրը, որը պետք է ընդգրկի կյանքի բոլոր կողմերը՝ և աշխատանքը, և գաղափարախոսությունը, և բարոյախոսությունը, և կրթությունը, և կենցաղը։ ՍՄԿՊ Ծրագրում նշվում է. «Պարտիան արդի էտապում գաղափարական աշխատանքում գլխավորն է համարում՝ բոլոր աշխատավորներին դաստիարակել բարձր գաղափարայնության և կոմունիզմի նկատմամբ նվիրվածության, աշխատանքի ու հանրային տնտեսության նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ոգով, լիովին հաղթահարել բուրժուական հայացքների ու բարքերի մնացուկները, բազմակողմանիորեն, ներդաշնակորեն զարգացնել անհատին, ստեղծել հոգևոր կուլտուրայի իսկական հարստություն»[9]։

Կոմունիզմի ծավալուն շինարարության ժամանակաշրջանում իրենց լուծումը կստանան փոխադարձաբար իրար հետ կապված այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, կոմունիստական հասարակական հարաբերությունների ձևավորումը և նոր մարդու դաստիարակումը։ Ժողովրդի կուլտուրական վերելքը այդ հիմնական խնդիրների, հաղթական կոմունիստական շինարարության գրավականն է։ Ինչպես նշվում է Ծրագրում, բնակչության կուլտուրական աճումից են վիթխարի չափերով կախված արտադրողական ուժերի վերելքը, տեխնիկայի պրոգրեսը և արտադրության կազմակերպումը, ինքնավարության դեմոկրատական հիմունքների զարգացումը, կենցաղի դեմոկրատական վերակառուցումը։ Հասարակության կուլտուրական զարգացման խնդիրները անխզելիորեն կապված են ՍՍՌՄ-ի հիմնական տնտեսական խնդրի՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման հետ։ Կոմունիզմին անցնելու համար պահանջվում է ոչ միայն հզոր տնտեսական պատվանդան, այլև մարդու հոգևոր նախապատրաստումը։

«Մենք այժմ լուծում ենք պատմական երկու խնդիր,—ասել է ընկ. Ն. Ս.

9 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 140։

Խրուշչովը 1960 թ. հուլիսի 9-ին ուսուցիչների համառուսաստանյան համագումարում ունեցած իր ելույթում,—կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը և նոր մարդու դաստիարակությունը։ Դա ըստ էության միասնական պրոցեսն է։ Եթե մենք ետ մնանք սովետական մարդկանց կրթության ու դաստիարակության գործում, ապա անխուսափելիորեն կարգելակվի կոմունիզմի կառուցման ամբողջ գործը»։

Ինչ խնդիրներ է դնում ՍՄԿՊ Ծրագիրը գաղափարախոսության և կուլտուրայի բնագավառում կուլտուրական մեծ ռևոլյուցիայի եզրափակիչ էտապում։

Կուլտուրական ռևոլյուցիայի եզրափակիչ էտապի կարևորագույն խնդիրն է բոլոր բանվորների ու գյուղացիների կուլտուր-տեխնիկական մակարդակը հասցնել ինտելիգենցիայի մակարդակին այն հաշվով, որ վերացվեն մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև էական տարբերությունները։

Մտավոր և ֆիզիկական աշխատանքի մերձեցման պրոցեսը անցնելով զարգացման սոցիալիստական էտապը, այժմ թևակոխել է իր բարձրագույն կոմունիստական էտապը, երբ նրանք օրգանապես կմիաձուլվեն։ ՍՄԿՊ Ծրագիրը ոչ միայն առաջադրում, այլև ցույց է տալիս այդ կարևորագույն խնդրի լուծման կոնկրետ ուղիները։ Մտավոր և ֆիզիկական աշխատանքի տարբերության վերացման, աշխատավորների բազմակողմանի զարգացման և կոմունիստական դաստիարակության գլխավոր ուղին Ծրագիրը համարում է ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթության իրականացումը և աշխատավոր բնակչության հանրակրթական և կուլտուր-տեխնիկական մակարդակի կազմակերպված ու սիստեմատիկ բարձրացումը։ Ահա ժողովրդական կրթության զարգացման հաղթարշավը առաջիկա 20 տարում։ Պարտիան իր Ծրագրում նախատեսում է առաջին տասնամյակում (մինչև 1970 թ.) իրականացնել պարտադիր միջնակարգ ընդհանուր պոլիտեխնիկական կրթություն դպրոցահասակ բոլոր երեխաների համար և 8-ամյա կրթություն երիտասարդության այն մասի համար, որը զբաղված է ժողովրդական տնտեսության մեջ։ Հաջորդ տասնամյակում (մինչև 1980 թ.) բոլորին կտրվի լրիվ միջնակարգ կրթություն ստանալու հնարավորություն։ Միայն մեր ռեսպուբլիկայի մասսայական դպրոցներում 1980 թ. սովորողների թիվը մի քանի հարյուր հազարով ավելի կլինի 1961 թ. 318 հազարի դիմաց։ Ընդսմին պարտիան բացառիկ մեծ ուշադրություն է դարձնում հասարակական դաստիարակության այնպիսի հիմնարկների լայն զարգացմանը, ինչպիսիք են գիշերօթիկ դպրոցները, երկարօրյա դպրոցները և խմբերը, նախադպրոցական հիմնարկները և այլն։

Գլխավոր ջանքերն ուղղելով դեպի միջնակարգ կրթության իրականացումը, պարտիան միաժամանակ ծրագրային նպատակ է դնում էլ ավելի հանրամատչելի դարձնել բարձրագույն կրթությունը։ Հատկապես լայն տարածում կգտնի երեկոյան և հեռակա ուսուցումը։ 1980 թ. բուհերի ուսանողների թիվը ՍՍՌՄ-ում կհասնի 8 միլիոնի, 1961 թ. 2600 հազարի դիմաց[10]։ Բավական է ասել, որ Հայաստանի բուհերում կսովորի մոտ 100 հազար ուսանող։ Ընդսմին XXII համագումարը գծեց կուլտուրայի հզոր նյութական բազայի ստեղծման մեծ ծրագիր (գրքի հրատարակման գործի բուռն զարգացումը, դպրոցների, գրադարանների, թատրոնների, ակումբների, կինոթատրոնների և կրթության ու կուլտուրական լուսավորության այլ օջախների ցանցի մեծացումը)։

[10] XXII съезд КПСС, Стенограф. отч., ч. I, М., 1962, стр. 222.

Կոմունիստական պարտիան կիրառում է խոշոր միջոցառումներ ժողովրդական կրթության ամբողջ սիստեմը կատարելագործելու, կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու ուղղությամբ։ Աշխատանքը հիմնավորապես դրված է մտել որպես դաստիարակության հզոր գործոն։ Եվ այլ կերպ չի էլ կարող լինել, քանի որ մարդու նախապատրաստումը աշխատանքային գործունեության, աշխատանքի՝ որպես առաջին կենսական պահանջի նկատմամբ սեր ու հարգանք դաստիարակելը կազմում է կոմունիստական դաստիարակության ամբողջ աշխատանքի էությունը, ուղն ու ծուծը։

Սովետական Հայաստանի օրինակը ցույց է տալիս, որ ուսուցման միացումը արտադրողական աշխատանքի հետ մատաղ սերնդի դաստիարակության միակ ճիշտ ուղին է և արդեն տվել է իր հիասքանչ արդյունքները։ Այժմ ռեսպուբլիկայում գործում են 363 արտադրական ուսուցմամբ միջնակարգ և 71ն ութնամյա դպրոցներ (չհաշված 157 տարրական դպրոցները)։ Զգալիորեն ամրապնդվել է այդ նոր տիպի դպրոցների նյութական բազան, ստեղծվել են արհեստանոցներ, լաբորատորիաներ, կաբինետներ։ Թե ինչ են արել ռեսպուբլիկայի դպրոցները աշխատանքային դաստիարակության բնագավառում, երևում է հետևյալ փաստերից. Գյուղական դպրոցներին կից գործող 145 արտադրական բրիգադները, որոնցում ընդգրկված էին 6375 աշակերտ, 1962 թ. մշակել են 4375 հեկտար բանջարանոց, խաղողի և պտղատու այգիներ, բամբակ, ճակնդեղ, կարտոֆիլ և այլն։ Ախուրյանի շրջանի Ազատան գյուղի դպրոցի արտադրական բրիգադը մշակել է 25 հեկտար եգիպտացորեն և 5 հեկտար շաքարի ճակնդեղ։ Ուշագրավ է, որ աշակերտները եգիպտացորենի յուրաքանչյուր հեկտարից ստացել են 518 ցենտներ կանաչ մասսա, իսկ կոլտնտեսությունը 500 ցենտներ։

Երևանի հազարավոր աշակերտներ իրենց արտադրական ուսուցումն անց են կացնում ժամացույցի, էլեկտրամեխանիկական, կաբելի, հաստոցաշինական, էլեկտրաճշգրիտ չափիչ սարքերի, գուլպա-տրիկոտաժի, կարի № 1 և 3 և այլ գործարաններում ու ֆաբրիկաներում, որտեղ արտադրության առաջավորների օգնությամբ ու ղեկավարությամբ նրանք ձեռք են բերում խառատի ու ատաղձագործի, ջուլհակի, մանածագործի, փականագործ-նորոգողի, ֆրեզերագործի, կարգավորողի և շատ այլ մասնագիտություններ։

Արդեն երրորդ տարին է, ինչ Կիրովականի № 9 միջ. դպրոցի բարձր դասարանների աշակերտները իրենց արտադրական ուսուցումն անց են կացնում «Ավտոմատիկա» գործարանում։ Սահմանված տեսական դասաժամերին նրանք հանգամանորեն ծանոթանում են ժամանակակից արտադրության, մետաղամշակության հիմունքներին, գործարանի արտադրած սարքերի կառուցվածքին և այլն։ Այնուհետև աշակերտները փաթաթման, հավաքման և մեխանիկական ցեխերում մասնակցում են արտադրական աշխատանքներին։ Ուսուցումը տարվում է այն հաշվով, որ մինչև դպրոցն ավարտելն, աշակերտները 2—3 տարում կարողանան քննություն հանձնել և ձեռք բերել տղաները՝ խառատի, փականագործի, իսկ աղջիկները՝ փաթաթողի և մեկուսացնողի որակավորում. Փորձը ապացուցել է, որ ուսուցման այս եղանակը խիստ դրական է անդրադառնում սովորողների ուսման առաջադիմության բարձրացման, շրջապատի նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքի ու բնավորության ձևավորման, երեխաների հոգևոր կուլտուրայի հարստացման վրա։ Բանվորական միջավայրի հետ շփումը վերջնականապես կոփում է աշակերտներին, նրանց նախապատ-

բաստում կյանքի մեծ ճանապարհ դուրս գալուն։ Պատահական չէ, որ դպրոցն ավարտելուց հետո շատերը մնում են աշխատելու գործարանում, իբրև նրա կոլեկտիվի լիիրավ անդամներ։

«Ժողովրդական կրթության սիստեմն այնպես է կառուցվում,—ասված է Ծրագրում,—որ աճող սերնդի ուսուցումն ու դաստիարակությունը սերտորեն շաղկապված լինեն կյանքի, արտադրողական աշխատանքի հետ, որ չափահաս բնակչությունը կարողանա արտադրության ոլորտում կատարած աշխատանքը զուգորդել ուսումն ու կրթությունը շարունակելու հետ՝ անձնական հակման ու հասարակության պահանջներին համապատասխան։ Այդ սկզբունքների վրա հենված ժողովրդական կրթությունը կնպաստի կոմունիստական հասարակության բազմակողմանիորեն զարգացած անդամների ձևավորմանը, սոցիալական ամենակարևոր պրոբլեմներից մեկի լուծմանը՝ մտավոր ու ֆիզիկական աշխատանքի էական տարբերությունների վերացմանը»[11]։

Դպրոցների, տեխնիկումների, բուհերի հետ մեկտեղ գնալով ավելի լայն ծավալ են ստանում տեխնիկական և պրոֆեսիոնալ պատրաստության զանազան ձևերը, հեռակա ու երեկոյան ուսուցման սիստեմը, ուր ուսուցումը զուգակցվում է արտադրողական աշխատանքի հետ։ Ներկայումս, առանց արտադրությունից կտրվելու, մոտ 7 միլիոն մարդ սովորում է ուսուցման այդ օղակներում։ Գնալով լայն զարգացում են գտնում ժողովրդական համալսարանները, կուլտուրայի ու տեխնիկայի դպրոցները և նման այլ ուսումնական հաստատություններ, որոնք լայնորեն նպաստում են աշխատավորների հանրակրթական-կուլտուրական մակարդակի բարձրացմանը։ Միայն մեր ռեսպուբլիկայում գործում են 83-ից ավելի կուլտուրայի, առողջապահության, գիտա-աթեիստական և այլ համալսարաններ, որոնցում ընդգրկված են շուրջ 16 հազար ունկնդիրներ։

Հենվելով էկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառներում ձեռք բերած հոյակապ նվաճումների վրա, և առավել ևս վստահ կոմունիստական վաղվանը, Սովետական Միությունը հռչակում է, որ առաջիկա երկու տասնամյակում բոլոր սովորել ցանկացողների համար ապահովվելու են բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու ռեալ պայմաններ։ Այսպիսով հասարակության անդամների հիմնական մասը՝ մինչև 1980 թ., տարբեր ճանապարհներով կստանա միջնակարգ, միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթություն։ Այդ կլինի կուլտուրական ռևոլյուցիայի եզրափակիչ էտապի կարևորագույն խնդրի՝ մտավոր և ֆիզիկական աշխատանքի օրգանական միացման լուծումը։

Մեր սերունդը վկա է այն բանին, թե ինչպես աստիճանաբար ձևավորվում է կոմունիստական հասարակության քաղաքացու բազմակողմանի ու ներդաշնակ զարգացած աշխատավորի նոր կերպարը։ Մեր բազմահարուստ կյանքն արդեն ցույց է տալիս, թե ինչպես աստիճանաբար ջնջվում են սահմանները բանվորների, ինժեներների ու տեխնիկների միջև։ Հաճախ դժվար է բանվորին տարբերել ինժեներից, առաջավոր կոլտնտեսականին՝ գյուղատնտեսից, անասնաբուժից, մեխանիկից։ Մտավոր և ֆիզիկական աշխատանքի մերձեցումը մեր առօրյա և առավել ևս կոմունիստական գալիքի ամենացայտուն ու տեսանելի գծերից մեկն է։ ՍՄԿՊ Ծրագրում նշվում է, որ «Կոմու-

11 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 148։

նիզմի հաղթանակով տեղի կունենա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի օրգանական միացում մարդկանց արտադրական գործունեության մեջ։ Ինտելիգենցիան կդադարի սոցիալական առանձին խավ լինելուց, ֆիզիկական աշխատանք կատարողները իրենց կուլտուր-տեխնիկական մակարդակով կբարձրանան մտավոր աշխատանքի մարդկանց մակարդակին»[12]։

Կոմունիզմի շինարարության գործում բացառիկ մեծ դեր է պատկանում սովետական գիտությանը։ Ռիտա-տեխնիկական բուռն առաջադիմության մեր դարում հասարակության և մարդկային անձնավորության զարգացումն անհրաժեշտ է առանց գիտության նվաճումների պլանաչափ և բազմակողմանի օգտագործման։ Գիտական գիտելիքների յուրացումը վիթխարի չափերով կընդլայնի կոմունիզմի շինարարի կուլտուրական մտահորիզոնը, կհարստացնի մարդու հոգևոր աշխարհը, կամրապնդի նրա գիտական աշխարհայացքը, մարդը կդառնա բնության իսկական տիրակալը։

* *

ՍՄԿՊ Ծրագիրը կուլտուրական ռևոլյուցիայի եզրափակիչ էտապի կարևորագույն խնդիրներից մեկը համարում է քաղաքի և գյուղի սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային տարբերությունների վերացումը, արտադրողական ուժերի մակարդակի և աշխատանքի բնույթի, արտադրական հարաբերությունների ձևերի հետ միասին՝ գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացումը քաղաքի մակարդակին։

Հանրահայտ է, որ կապիտալիզմը գյուղը քաղաքին է ենթարկում ոչ միայն տնտեսապես և քաղաքական տեսակետից, այլև նրան դատապարտում է խավարի, գյուղական բնակչությանը զրկում է կուլտուրայի բարիքներից օգտվելուց։ Գյուղի կուլտուրական հետամնացության հաղթահարումը գիտական կոմունիզմի կարևորագույն ծրագրային պահանջներից մեկն է։ Քաղաքի և գյուղի միջև հակադրության վերացումը,—գրել է Լենինը,—անհրաժեշտ է նրա համար, որպեսզի գիտության, արվեստի, հոգևոր արժեքների գանձարանները դարձնենք մատչելի ամբողջ ժողովրդին, որպեսզի ոչնչացնենք գյուղական բնակչության միլիոնների այն խորթությունը կուլտուրայից, որ Մարքսն այնպես դիպուկ անվանել է «գյուղական կյանքի իդիոտիզմ»[13]։ ՍՍՌՄ-ում արդեն լիկվիդացվել է գյուղի վաղեմի կուլտուրական հետամնացությունը։ Սովետական գյուղը տնտեսական կյանքի հետ միասին մեծ թռիչք է կատարել կուլտուրական առաջադիմության ուղղությամբ։ Ցարական Ռուսաստանում, 1897 թ. տվյալներով բնակչության յուրաքանչյուր 1000 հոգուն գյուղական վայրերում ընկնում էր տարրականից բարձր կրթությամբ՝ 3 մարդ, իսկ քաղաքում՝ 61։ ՍՍՌՄ-ում՝ 1959 թ. յուրաքանչյուր 1000 բնակչին ընկնող տարրականից բարձր կրթություն ունեցողների թիվը գյուղական վայրերում կազմում էր 249, իսկ քաղաքում՝ 441 մարդ։

Գյուղը ստեղծել է իր կուլտուրայի օջախները, սեփական ինտելիգենցիան և այլն։ Սակայն գյուղական բնակչության կուլտուր-տեխնիկական մակար-

12 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 7։

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 201։

դակը դեռևս զգալիորեն ետ է մնում քաղաքային բնակչության մակարդակից։ Այսպես, օրինակ, եթե քաղաքում բնակչության 3,2 տոկոսն ունի բարձրագույն կրթություն, ապա գյուղական վայրերում՝ 0,58 տոկոսը, միջնակարգ և թերի միջնակարգ քաղաքում՝ 34,4 տոկոսը, գյուղում՝ 18,8 տոկոսը։

Ժամանակակից գյուղը, այդ թվում և սովետահայ գյուղը, քաղաքից հետ է մնում դպրոցների, ակումբների, կինոթատրոնների, նախադպրոցական հիմնարկների թվով, ռադիոֆիկացիայի և հատկապես հեռուստատեսության տեսակետից, կուլտուր-կենցաղային սպասարկմամբ և այլն։

ՍՄԿՊ Ծրագիրը սահմանել է սովետական գյուղի զարգացման ուղղությունները ու պրոցեսները կուլտուրայի և կենցաղի բնագավառներում։ «Կոլտնտեսային գյուղերն ու շները հետզհետե կվերափոխվեն ու կդառնան քաղաքատիպ խոշորացված բնակավայրեր՝ բարեկարգ բնակելի տներով, կոմունալ սպասարկումով, կենցաղային ձեռնարկություններով, կուլտուրական և բժշկական հիմնարկներով։ Վերջին հաշվով, կյանքի կուլտուր-կենցաղային պայմաններով գյուղական բնակչությունը կհավասարվի քաղաքի բնակչությանը։

Քաղաքի և գյուղի սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային տարբերությունների վերացումը կենդանի կոմունիզմի կառուցման մեծագույն արդյունքներից մեկը»[14]։

Պարտիայի ծրագրային պահանջները իրագործելու ուղղությամբ արդեն սովետահայ գյուղը որոշակի քայլեր է կատարում։ Այդ տեսակետից, շատերի թվում, բնորոշ է Ապարանի օրինակը։ Երևկվա այդ հասարակ, արհամարհված գյուղը, այսօր դարձել է քաղաքատիպ ավան։ Վերջին տարիներս այստեղ բացվել են նոր փողոցներ, կառուցվել բազմահարկ գեղեցիկ տներ։ Պանրի գործարանի կողքին այսօր հասակ են առնում կենցաղային օգտագործման, տրանսֆորմատորների ձեռնարկության, լիմոնադի, գորգերի գործարանների կորպուսները։ Շարք են մտել պիոներների տունը, մանկապարտեզը, պոլիկլինիկան, շուտով շահագործման կհանձնվի գիշերօթիկ դպրոցը։ Ավելի վառ է Ապարանի վաղվա օրը։ Այս և մոտ տարիներս, բնակելի նոր շենքերի հետ միասին, կյանքի կկոչվեն ութնամյա դպրոցի, նոր մանկապարտեզի, հրշեջ դեպոյի, սառնարանի շենքերը, կվերակառուցվի կինոթատրոնի շենքը, կկառուցվի կուլտուրայի պալատ, լեռների գրկում կծնվի լիճը՝ իր հանգստյան տներով, սպորտային բազաներով, իսկ լճի ափին քաղաք կդառնա Ապարանը։ Այդպես, մեր բնակավայրերը «կգուգորդեն այն ամեն լավագույնը, ինչ ունի ժամանակակից քաղաքը՝ բարեկարգ բնակելի տներ, տրանսպորտային մայրուղիներ, կոմունալ-կենցաղային, մանկական, կուլտուրական և սպորտային հիմնարկներ, այն ամեն լավագույնի հետ, ինչ ունեն գյուղական վայրերը՝ հարուստ կանաչ, ջրավազաններ, մաքուր օդ»[15]։ Քաղաքային և գյուղական բնակչությունը, իրենց կենցաղով ու կուլտուրայով, իրարից չեն տարբերվի, և պատմության թանգարան հանձնված տրեխ, արոր, չութ, կուլակ, անդրագիտություն և նման հասկացողությունների թվին ժամանակը կավելացնի նաև մեկ ուրիշ՝ «գյուղ» հասկացողությունը։

---

14 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 102։

15 Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ Ծրագրի մասին, Երևան, 1961, էջ 82։

* * *

ՍՄԿՊ Ծրագիրը, կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում, կուլտուրական շինարարության առաջնակարգ խնդիրներից մեկը համարում է բնակչության կուլտուրական սպասարկման հասարակական ձևերի ընդարձակումը, կուլտուրական կյանքի բազմակողմանի զարգացման գործում՝ հասարակական սկզբունքի բուռն աճը։

Կուլտուրական ռևոլյուցիայի եզրափակիչ էտապը իրենով նշանավորում է ժողովրդի ստեղծագործական հանճարի լիակատար բարգավաճումը։ «Կոմունիզմին անցնելու պայմաններում,—ասվում է Ծրագրում,—ստեղծագործական գործունեությունը կուլտուրայի բոլոր բնագավառներում առանձնապես արդյունավետ և հասարակության բոլոր անդամների համար մատչելի է դառնում։ Սովետական դրականությունը, երաժշտությունը, գեղանկարչությունը, կինեմատոգրաֆիան, թատրոնը, հեռուստատեսությունը, արվեստի բոլոր տեսակները նոր բարձունքների կհասնեն գաղափարական բովանդակության և գեղարվեստական վարպետության զարգացման գործում։ Լայնորեն կտարածվեն ժողովրդական թատրոնները, մասսայական ինքնագործունեությունը, տեխնիկական գյուտարարությունը և ժողովրդական ստեղծագործության մյուս ձևերը... Գեղարվեստական սկզբունքն է՝ լավելի ոգեշունչ կդարձնի աշխատանքը, կգեղեցկացնի կենցաղը և կազնվացնի մարդուն»[16]։

Ահա կյանքը գնալով ավելի է հաստատում Մ. Գորկու խոսքերը. «...Ժողովուրդը միայն նյութական արժեքներ ստեղծող ուժ չէ, նա հոգևոր արժեքների միակ անսպառ աղբյուրն է»։ Հիրավի. սովետների երկրի միլիոնավոր աշխատավորներ իրենց ձիրքերն ու ընդունակությունները զարգացնում են ժողովրդական գեղարվեստական ինքնագործունեության մեջ։ Ժողովուրդը օրեցօր առատորեն ստեղծում է կուլտուրայի ու արվեստի նոր արժեքներ և դրանք սպառելու նորանոր ձևեր։ Դրա վառ ապացույցը մեր ռեսպուբլիկան է, որտեղ ներկայումս գործում է գեղարվեստական ինքնագործունեության 3 հազար խումբ, որոնցում ընդգրկված է 30 հազար մարդ։ Շատ ինքնագործ խմբեր հասել են պրոֆեսիոնալ վարպետության և իրավունք նվաճելով, հանդես են եկել ոչ միայն ռեսպուբլիկայի քաղաքներում ու ավաններում, այլ նաև Մոսկվայում, Լենինգրադում և Միության այլ խոշոր քաղաքներում։ Գնալով սովորական երևույթ է դառնում ինքնագործ կերպարվեստի, ինքնուս նկարիչների ստեղծագործություններին նվիրված ցուցահանդեսների կազմակերպումը ռեսպուբլիկայի քաղաքներում, շրջկենտրոններում ու գյուղերում, առանձին ձեռնարկություններում, որտեղ կարելի է տեսնել արվեստի իսկական նմուշներ։ Ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական տանը բացված մշտական գործող ցուցահանդես-թանգարանում ցուցադրվում է ինքնուս ստեղծագործողների շուրջ 1500 աշխատանք։ Կոմունիստական կուլտուրան դա համաժողովրդական ստեղծագործություն է։

Գեղարվեստական ինքնագործունեության հիմնական նպատակն է օգնել աշխատավորների գեղարվեստական ճաշակի, ձիրքերի զարգացմանը, հոգևոր հարստացմանը, նրանց ներշնչել փառապանծ գործերի հանուն կոմունիզմի հաղթանակի։ Ինքնագործունեության կարևոր առանձնահատկությունը ոչ միայն

16 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 156—157։

հանգստի կուլտուրական կազմակերպման հետ հանրօգուտ արտադրողական աշխատանքի զուգորդումն է, այլ նաև ժողովրդական տաղանդների դրսևորման ամենամասսայական ձևն է, գեղարվեստական կուլտուրայի զարգացման մեջ աշխատավորների դերի բարձրացումը։ Այդ տեսակետից ինչքան իմաստուն ու հեռատես են հնչում ՍՄԿՊ Ծրագրի այն խոսքերը, թե մասսաների գեղարվեստական ինքնագործունեության վերելքը կնպաստի նոր տաղանդավոր գրողների, նկարիչների, երաժիշտների, արտիստների առաջքաշմանը։ Հիրավի։ Իջևանի ավտովերանորոգման դրասենյակի ատաղձագործ Աշոտ Մկրտումյանը հիանալի քանդակագործ է։ Նրա տունը նման է արվեստագետի արհեստանոցի։ Սովետական Հայաստանի 40-ամյակին նվիրված ցուցահանդեսում նա հանդես է եկել տրելյաժով և գրենական պիտույքներով։ Ուշագրավ է Ա. Մկրտումյանի գրիչը, որի վրա մանրադիտակով կարելի է դիտել աղավնու փորագիրը։ Շրջկենտրոնի ռուսական դպրոցի արհեստանոցի բանվոր Լյովա Ամյանը միաժամանակ երաժիշտ և հմուտ գյուտարար է։ Ուշադրության արժանի են նրա ինքնաշեն մեքենան, լուցկու տուփի մեծությամբ գրպանի ռադիոընդունիչը, երկրի շուրջը պտտվող արբանյակի մակետը և այլ ստեղծագործություններ, որոնք ցուցադրվում են շրջանային ցուցահանդեսում։ Ընկերության Իջևանի բաժանմունքի երիտասարդական հանձնաժողովին կից Տ. Շևչենկոյի անվան գրական ստուդիան դարձել է տաղանդների դարբնման դպրոց։ Հիդրոտեխնիկ Սերո Խուդավերդյանը, բանվորներ՝ Եղիշե Հովսեփյանը, Գիգուշ Մկրտումյանը, կոլտնտեսականներ՝ Թելման Մայիլյանը և Վիկտոր Մատինյանը, Ռազմիկ Օհանյանը և Նորայր Արզումանյանը, գրադարանավար Երջանիկ Բաղալյանը, ուսուցիչ Ռաֆիկ Թեյմուրազյանը, փոստատար Էդիկ Էդիլյանը, ինչպես և ստուդիայի մյուս անդամները, իրենց ձիրքերն ու ընդունակությունները զարգացնում են պոեզիայի, արձակի, երգիծանքի, ակնարկների, գեղարվեստական քննադատության և թարգմանության ասպարեզներում։ Այո, նրանք և՛ աշխատում են և՛ ստեղծագործում։ Ստուդիայի անդամների ստեղծագործությունները մեծ մասամբ տպագրվել են տեղական, ռեսպուբլիկական, «Լվովսելմաշովեց» ուկրաիներեն թերթում, ինչպես նաև Դառնիկ Անանյանի (ստուդիայի նախկին ղեկավարը, այժմ ասպիրանտ) «Եվ աշխատում են, և ստեղծագործում» բրոշյուրում, որը լույս է տեսել 1961 թ.։

Ստուդիան վաղուց բարեկամական կապերի մեջ է Լվովի «Լվովսելմաշ» գործարանի Հ. Թումանյանի անվան գրական ստուդիայի հետ։ Երկու ստուդիաները նախաձեռնել են միատեղ հրատարակելու բարեկամության ալմանախ։ Երբ ընթերցում ես գրական սոլիդ ժառանգություն ստեղծած և ծաղկման արբունք ապրող այդ ինքնուս գրողներին, երիտասարդ բանաստեղծներին, որոնց գործերը գեղարվեստական կատարելությամբ գուցե և զիջում են պրոֆեսիոնալների երկերին, այնուամենայնիվ հոգիդ լցվում է անհուն հպարտությամբ։ Չէ՞ որ դա մեծ խոհերի ու գործերի տեր նոր մարդն է, այն երջանիկ սերունդը, որը, ինչպես հռչակում է պարտիայի Ծրագիրը, կապրի կոմունիզմի օրոք։ Կոմունիզմը մարդկության և մարդկային անհատի բարձրագույն ծաղկումն է։ Այստեղ, ինչպես ասել են Մարքսը և Էնգելսը, «...ամեն մեկի ազատ զարգացումը հանդիսանում է բոլորի ազատ զարգացման պայմանը»[17]։

17 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Պետհրատ, 1938, էջ 73։

Այսօր դեռևս համեստ են ինքնագործ արվեստի հաջողությունները. սակայն գեղարվեստական ինքնագործունեության բուռն զարգացումը է, ավելի կհարստացնի և կբեղմնավորի պրոֆեսիոնալ արվեստը։ Ինչպես նշվում է Ծրագրում, հասարակության գեղարվեստական գանձարանի զարգացումն ու հարստացումը ձեռք է բերվում մասսայական գեղարվեստական ինքնագործունեության և պրոֆեսիոնալ արվեստի զարգացման հիման վրա։ Պրոֆեսիոնալ թատերական, երաժշտական և ստեղծագործական մյուս կոլեկտիվների ու արվեստի վարպետների պարտքն է ամենօրյա օգնություն ցույց տալ գեղարվեստական ինքնագործունեության մասնակիցներին։ Ցավոք սրտի այդ միշտ չէ, որ արվում է։ 1961 թ. նոյեմբերին Երևանում կայացած ժողովրդական թատրոնների ռեսպուբլիկական ստուգատեսը ակնհայտ դարձրեց, որ նրանց ցույց տրվող օգնությունը որոշ դեպքերում նույնիսկ անբավարար է։

Սովետական հասարակության հոգևոր կուլտուրայի զարգացման մեջ գնալով ավելի մեծ գեր է խաղում և կխաղա հասարակական սկզբունքի արմատավորումը, ՍՄԿՊ Ծրագրով նախատեսված սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ծավալումը։ Դիմենք փաստերին։ 20 միլիոնանոց կոմերիտմիությունը համամիութենական մրցություն է ծավալել բանվորական և գյուղական երիտասարդության հանրակրթական ու կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման համար։ Դասախոսական աշխատանքը երկրում կազմակերպում ու վարում է ոչ միայն կուլտուրայի մինիստրությունը, այլև քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը սովետական ինտելիգենցիայի ինքնագործ կազմակերպությունը, սպորտի և ֆիզկուլտուրայի գործի զարգացումը գլխավորում են կամավոր սպորտային ընկերությունները, շատ ակումբներ, գրադարաններ և այլ կուլտուրական հիմնարկներ գտնվում են արհմիությունների իրավասության տակ։ Հասարակայնության, գիտության ու կուլտուրայի գործիչների նախաձեռնությամբ ծագել են հասարակական հիմունքներով գործող կուլտուրայի այնպիսի օջախներ, ինչպիսիք են կուլտուրայի, տեխնիկայի համալսարանները, ժողովրդական թատրոնները, ռացիոնալիզատորական ինստիտուտները և այլն։ Դեպի կոմունիզմ մեր առաջընթացին զուգընթաց կուլտուրայի և կրթության գործը լրիվ կանցնի հասարակական կազմակերպությունների տնօրինությանը, այդ գործով զբաղվող պետական օրգանները կսպառեն իրենց քաղաքական բնույթը և կդառնան հասարակական ինքնավարության օրգաններ։

* * *

ՍՄԿՊ Ծրագիրը կուլտուրական ռևոլյուցիայի եզրափակիչ էտապի կենտրոնական խնդիրը համարում է՝ կոմունիստական գիտակցության ու բարոյականության դաստիարակումը, մարդկանց գիտակցության մեջ և վարքագծում կապիտալիզմի մնացուկների իսպառ վերացումը, սոցիալիստական գիտակցության վերաճումը կոմունիստականի։

Կոմունիստական հասարակության մարդու ձևավորումը պարտիայի առջև ծառացած ամենաբարդ, պատասխանատու և վեհ խնդիրն է։ Այդ առանց չափազանցության կարելի է ասել կոմունիզմի շինարարության պսակն է, պարտիայի գաղափարական աշխատանքի գլխավոր գիծը, նրա ներգործունության վճռական ցուցանիշը։ Կոմունիզմը մարդու հիմն է, այն մարդու, որի մեջ, ինչպես նշվում է Ծրագրում, ներդաշնակորեն կզուգակցվեն հոգևոր հարստությու-

ներ, բարոյական անաղարտությունը և ֆիզիկական կատարելությունը։ Հոգևոր հարստություն ասելով հասկացվում է գիտական աշխարհայեցողություն, դաղափարական համոզվածություն, պոլիտեխնիկական կրթություն, ներքին և արտաքին բարձր կուլտուրա, էսթետիկական ճաշակի զարգացում։ Սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում բազմակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդու ձևավորման առաջին էտապի ավարտումն էր։ Կոմունիզմի օրոք այդ պրոցեսը պետք է ավարտվի։ «Նոր մարդու, մեծ իդեալների ու բարոյական վեհ սկզբունքների տեր մարդու դաստիարակումը,—ասաց Ն. Ս. Խրուշչովը XXII համագումարում։—պարտիայի գլխավոր նվաճումներից մեկն է... Այժմ մենք ի վիճակի ենք առաջ քաշելու և իրագործելու մարդկանց հարաբերություններում ամենաազնիվ սկզբունքները, որոնց մասին երազել են աշխատավորների բազում սերունդներ։ Այդ սկզբունքները մարմնավորված են կոմունիստական բարոյականության կոդեքսի կոնկրետ կետերում»[18]։

Այդ խնդրի լուծումը կապահովվի կոմունիզմի հաղթանակի համար անհրաժեշտ դաղափարական ու կուլտուրական պայմանների ստեղծմամբ։ Եվ այդ էլ կլինի կուլտուրական մեծ ռևոլյուցիայի եզրափակիչ էտապի արժանի ավարտումը։

Պայքար կոմունիստական կուլտուրայի համար՝ դա պայքար է ամենից առաջ մարդկային ամենավեհ հատկությունների և վարքի նորմաների համար։ Կուլտուրայի սինթեզի մեջ բարոյականը և էթիկականը միասնության մեջ են։ Կոմունիզմը ստեղծում է հենց այդպիսի ձուլվածք։

Սովետական մարդը, որը մեր երկրում իրեն լիովին նվիրել է կոմունիզմի շինաբարությանը, ապագայի մարդու եղբայրն է։ Կոմունիստական աշխատանքի բրիգադներում, խոպանի յուրացման շրջաններում, Սիբիրի ու Հեռավոր Արևելքի նորակառույցներում, ամենուր, արտադրության միլիոնավոր առաջավորներ ու փարոսներ ձգտում են աշխատել ու ապրել կոմունիստաբար, իրենց մեջ պատվաստում են կոմունիզմի շինարարի հոգևոր ու բարոյական հատկություններ, այն է՝ աշխատանքի՝ որպես առաջին կենսական պահանջմունքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքը, կոլեկտիվիզմը և այլն։ Սովետական հասարակությունը արդեն այժմ սկսում է իրագործել կոմունիզմը կառուցողի բարոյական կոդեքսի սկզբունքները։

ՍՄԿՊ Ծրագիրը դծել է նոր մարդու ձևավորման հիմնական խնդիրները ու ուղղությունները, որոնք հանդում են հետևյալին՝ գիտական աշխարհայացքի հաստատումը, աշխատանքային դաստիարակությունը, կոմունիստական բարոյականության սկզբունքների ամրապնդումը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական հայրենասիրության զարգացումը, մարդկային անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը։

Ծավալուն կոմունիստական շինարարությունը իրենով նոր էտապ է նշանավորում ՍՍՌՄ ժողովուրդների՝ բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրաների համակողմանի զարգացման ու փոխադարձ հարստացման, ազգերի և ազգությունների դաղափարական միասնության, նրանց կուլտուրաների հետագա մերձեցման գործում։ Սոցիալիզմը ազգային հարցում ծնունդ է տվել փոխադարձաբար միմյանց հետ կապված երկու տենդենցներ.

18 Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետվությունը XXII համագումարին, Երևան, 1961, էջ 175—176։

նախ՝ յուրաքանչյուր ազգի բուռն ու համակողմանի զարգացում, միութենական և ավտոնոմ ռեսպուբլիկաների իրավունքների ընդարձակում, երկրորդ՝ ազգերի տնտեսական ու կուլտուրական սերտ մերձեցում, նրանց փոխազդեցության և փոխադարձ հարստացման ուժեղացում։ Կոմունիզմի շինարարության պրոցեսում տեղի կունենա ազգերի հետագա մերձեցում։ Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցումը տանում է դեպի սովետական ժողովուրդների է՛լ ավելի կուռ միավորումը։ Դասակարգերի միջև եղած սահմանների ջնջվելը և կոմունիստական հասարակական հարաբերությունների զարգացումը գնալով կուժեղացնեն ազգերի սոցիալական միասեռությունը, կնպաստեն կուլտուրայի, բարոյականության ու կենցաղի կոմունիստական ընդհանուր գծերի զարգացմանը, նրանց փոխադարձ վստահությանն ու բարեկամության հետագա ամրապնդմանը։

ՍՍՌՄ ազգերի ու ազգությունների մերձեցման ու համակողմանի զարգացման գործում կարևոր դեր է խաղում նաև կուլտուրական շինարարությունը, գաղափարական աշխատանքը։ Ինչպես նշվում է պարտիայի Ծրագրում, սոցիալիզմի շինարարության և սոցիալիստական ազգերի զարգացման պատմական փորձը ապացուցում է, որ ազգային կուլտուրայի ձևերը չեն քարանում, այլ կերպարանափոխվում, կատարելագործվում ու մերձենում են միմյանց, ազատվելով հնացած այն ամենից, ինչը հակասում է կոմունիզմի կառուցման նոր պահանջներին։ Հարգանում է սովետական բոլոր ազգերի համար ընդհանուր ինտերնացիոնալ կուլտուրան։ Դրա շնորհիվ յուրաքանչյուր ազգի կուլտուրական գանձարանը ավելի ու ավելի է հարստանում նոր ստեղծագործություններով, որոնք դուրս են գալիս ազգային շրջանակներից և ձեռք բերում ինտերնացիոնալ բնույթ։ Այդ կապակցությամբ պարտիան, վճռական նշանակություն տալով ՍՍՌՄ ժողովուրդների կուլտուրաների սոցիալիստական բովանդակության զարգացմանը, «կնպաստի նրանց հետագա փոխհարստացմանն ու մերձեցմանը, նրանց ինտերնացիոնալ հիմքի ամրապնդմանը և դրանով իսկ կոմունիստական հասարակարգի ապագա համամարդկային միասնական կուլտուրայի ձևավորմանը»[19]։ Պարտիան ըստ ամենայնի կպաշտպանի յուրաքանչյուր ժողովրդի առաջադիմական տրադիցիաները, դրանք կգարձնի սովետական բոլոր մարդկանց սեփականությունը, ըստ ամենայնի կզարգացնի կոմունիզմ կառուցողների նոր, բոլոր ազգերի համար միասնական ռևոլյուցիոն տրադիցիաներ։

* *

Կոմունիզմը արդեն մոտ ապագա է, շոշափելի իրողություն։ ՍՄԿՊ XXII համագումարը, պարտիայի նոր Ծրագիրը նշեցին և գիտականորեն հիմնավորեցին դեպի կոմունիզմ տանող մայրուղիները։ Եվ այժմ մենք գիտենք, որ կոմունիզմը դա մարդկային ամենաբարձր երջանկության, արդարության, հումանիզմի, ստեղծագործական խիզախումների, լիարժեք կենցաղի, մարդու փոխակերպող հզոր ուժի անսահման ու անհուն օվկիանոս է։ Այդ օվկիանոսը ծագում, աճում ու ընդարձակվում է հենց այժմ, մեր աչքերի առաջ սովետական մարդկանց տիտանական աշխատանքով։ Ժողովրդական ստեղծագործության հզոր դետերը նրա մեջ են տանում իրենց թանկարժեք պարգևները։ Հորդառատ

19 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 138։

գետերի նման նրանք ընդհանուր դանձարանն են լցնում նյութական ու հոգևոր արժեքները։ Այդպես ծագում ու կազմավորվում է նոր կուլտուրան։ Սովետական կուլտուրան ծառայում է կոմունիզմի պատմական միսիային՝ աշխարհում բոլոր ժողովուրդների համար հաստատել խաղաղություն, Աշխատանք, Հավասարություն, Եղբայրություն և Երջանկություն։